

Թարգմանիչ -5

Թարգմանչաց օրվա առթիվ

հոկտեմբեր

**«Եթե մի բան ուզում ես լավ հասկանալ, թարգմանիր դա»
Բերնարդ Շոու**

Թարգմանությունը լուրջ գործ է: Թարգմանողը նաև հետազոտում-
ուսումնասիրում է իր ընտրած նյութի ոճն ու ձևը, փորձում դրանք
արտահայտել թարգմանվող լեզվով:

Թարգմանությունը սովորելու միջոց է. ամեն անգամ
թարգմանություն անելիս մշակվում են զանազան հմտություններ:
Ամենակարևորը՝ թարգմանելիս զգում ես մտածողությունների
տարբերությունները:

Թարգմանությունը խաղ է. կարողացիր գտնել թարգմանվող լեզվում
համապատասխան ձևերը, և քեզ բավարարված կզգաս, ինչպես
խաղում հաղթողը:

Թարգմանել, թարգմանել, թարգմանել:

Բովանդակություն

1. Լիլիթ Աղաջանյան. Ռավեննայի Սան Վիտալե եկեղեցին.....	4
2. Իսպանական Մենթալիտետ	5
3. Նինա Մամարյան . Day tripper Հարուկի Մուրակամի.....	7
4. Վարորդ վամպիրը. Հարուկի Մուրակամի.....	9
5. Գոհար Մահակյան. Ավստրալիական դաստիարակություն.....	13
6. Աշոտ Փաշինյան. Աֆորիզմներ Էռնեստ Հեմինգուեյից.....	15
7. Կարինե Գևորգյան. Երջանկությունը գիտական տեսանկյունից.....	16
8. Նարե Ղալամքարյան. Պետք է ծովի մոտ ապրել, մա՛մ.....	18
9. Նունե Մովսիսյան. Տոլստոյի մանկավարժական հայացքները.....	20
10. Հեմինգուեյ. Մահվան և վախի մասին.....	21
11. Կարինե Թևոսյան. Ջիրութիի աղբարկղը. Դանիել Պենակ.....	22
12. Հասմիկ Ղազարյան. Կուրոսավայի և Գարսիա Մարկեսի զրույցը.....	24
13. Նոամ Չոմսկի. Մեդիայի մոլորեցնող տասը ռազմավարությունները.....	29

Ռավեննայի Սան Վիտալե եկեղեցին



Լիլիթ Աղաջանյան (12-րդ դասարան)

Ռավեննայի Սան Վիտալե բազիլիկան բյուզանդական արվեստի կարևորագույն խորհրդանիշներից է: 1966 թվականին վաղ քրիստոնեական շրջանի հուշարձանների հետ մտել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկ: Ռավեննայի վաղ քրիստոնեական 8 խորհրդանիշներից առանձնանում է իր խճանկարների կատարելությամբ:

[Աղբյուր 1](#)

Այս եկեղեցին արտացոլում է հռոմեական ու

բյուզանդական արվեստների համակցությունը: Սան Վիտալեի կառուցման համար գործի են դրվել աղյուսների ավելի մեծ չափերը, որոնք հատուկ են միջնադարին: Սան Վիտալե եկեղեցին կառուցվել է 526-537 թվականներին: Պատերի դասավորությունն սկզբում թվում է հատուկ հռոմեական արվեստին. հիմնականում պատերը կառուցված են երկար ու նեղ աղյուսներից: Ավելի ուշադիր նայելով՝ նկատում ենք, որ այն շեղվում է դեպի բյուզանդական արվեստը, քանզի պատերը կառուցված են ամբողջությամբ ուղղանկյուն աղյուսներից: Եկեղեցու քիվերը բաղկացած են 5 շերտից, որոնցից երկուսն ունեն զիգզագի տեսք: [Աղբյուր 2](#)

Եկեղեցին կառուցված է ութանկյան սկզբունքով:

Արտաքինից եկեղեցին մեծ չի թվում, սակայն բավական է մտնել երս հասկանալու համար, որ այդ համոզմունքը ճիշտ չէ: Սան Վիտալե բազիլիկան զարմացնում է այոների շատությամբ, որոնց շարքերը միմյանց նկատմամբ ունեն ներդաշնակ դիրք: Սյունների վերնախարիսխները ամբողջովին պատված են քանդակված կերպարներով:



Առհասարակ, վերնախարիսխներն այնքան բարդ ու մանր նախշերով են արվել, որ դրանք թվում են մարմարյա ժանյակներ: Այստեղ արտացոլվում է ողջ կենդանական աշխարհը. ամենուրեք կան կենդանիների ու թռչունների ոսկեգոծ պատկերներ:



Ի տարբերություն Այա Սոֆիայի տաճարի, որտեղ ժամանակի ընթացքում պատերի ձևավորումը կրել է փոփոխություններ, ապա այստեղ՝ Սան Վիտալեում, պահպանվել են խճանկարներով արված ամենաառաջին դեկորացիաները: Խճանկարները դիտորդի ուշադրությունը գրավում են նաև իրենց գունային բազմազանությամբ: Եկեղեցու պորտալում մեղալյոնների մեջ պատկերված են Քրիստոսի ու առաքյալների գլուխները: Խճանկարների մեջ աչքի է ընկնում նաև Աստվածային գառի պատկերը, որը չորս կողմից շրջապատված է հրեշտակներով: Այս պատկերն իրենից ներկայացնում է նաև ոսկեգույն ու դեղին ֆոնների հաջորդականություն



Աղբյուր 3

Վարպետները խճանկարների միջոցով կարողացել են ընդգծել բազիլիկայի ճարտարապետական տարրերը՝ շեշտը դնելով կառուցման տարրերի ու դրանց վրա արված պատկերների սիմվոլիկ կապի վրա:

Սան Վիտալե եկեղեցին մեծ նշանակություն ունի նախ Ռավեննայի համար, քանզի այս քաղաքը բավականին փոքր է, իսկ դրա՝ ժամանակին ունեցած մեծության ու հզորության մասին այսօր խոսում են միայն դրա

հոյակերտ կառույցները, որոնցից մեկն էլ հենց Սան Վիտալե եկեղեցին է:

Իսպանական մենթալիտետ

Իսպանիան բազմազգ երկիր է, որտեղ բնակիչները միմյանցից տարբերվում են նույնիսկ արտաքինով: Այս 40 միլիոնանոց երկրում միայն ազգերը բազմազան չեն. այստեղ խոսում են տարբեր լեզուներով: Իսպանիայում կա 4 պաշտոնական լեզու՝ կատալոներեն, բասկերեն, կաստիլերեն և գալիերեն: Երկրի յուրահատկությունը արտացոլվում է իր մշակույթի և պատմության մեջ: Իսպանացի մշակութաբան և փիլիսոփա Սալվադոր դե Մադարիագան ենթադրում էր, որ իսպանական ազգային բնավորության սկզբունքը համարվում է պատիվը: Երկրի բոլոր բնակիչները բաց են, կենսուրախ և անմիջական: Իսպանացիները չեն սիրում տանը նստել, նրանք հանդիպում են միմյանց բացառապես բարերում կամ սրճարաններում: Նրանց մոտ գիշերը քնին նախապատրաստվելու համար չէ, հետևաբար, տարօրինակ չէ, որ իսպանացիները ընթրում են հիմնականում ժամը 23-ին: Երիտասարդները բավականին շուտ են դառնում ինքնուրույն, և, չնայած այս հանգամանքին, նրանք ամուսնանում են բավականին ուշ:

Եթե մի օր լինեք Իսպանիայում, ապա մոռացեք հին ասույթը՝ «Իսպանիայում պահիր քեզ իսպանացու նման»: Իսպանացիներն իրենք էլ չգիտեն, թե ինչ կանեն հաջորդ րոպեին:

Իսպանացիները չեն ամաչում բացահայտ ցույց տալ իրենց զգացմունքները: Նրանք շատ են ծիծաղում ու չեն նեղվում իրենց երջանկությունը ցույց տալուց: Խոսակցության ժամանակ նրանք արտահայտիչ են և շատ են դիմում ժեստերի օգնությանը:

Իսպանացիների համար երեխան ամեն ինչից վեր է: Նրանք ոչ միայն չեն հասկանում, թե ինչպես չի կարելի երեխային թողնել զվարճանալ, ինչպես օրինակ Անգլիայում, այլ դա համարում են ոչ քաղաքակիրթ երևույթ: Երեխայի բարձր ճիչն այստեղ համարվում է կյանքի տեսիլք: Երեխաներին երբեք չեն պատժում քնով: Կուպիտ ասած՝ նրանց երբեք չեն ստիպում քնել: Երեխան, գիշերը ժամը երկուսին խաղալով, արժանանում է ծնողների հպարտությանը: Մա սովորական երևույթ է:

Իսպանական մենթալիտետի հիմնական հատկանիշներն են սերը կյանքի յուրաքանչյուր դրսևորման հանդեպ, ինտուիտիվ մտածելակերպը, հումանիզմն ու ինդիվիդուալիզմը: Իսպանացիների վերաբերմունքը շրջակա իրականության հանդեպ բնորոշվում է «Ես և աշխարհը» ձևակերպման մեջ:

Իսպանացու ուշադրության կենտրոնում նախ ինքն է և իրեն մոտ մարդիկ, հետո նոր՝ երկիրը:
Իսպանացիները տանել չեն կարողանում իրենց անձնական ազատության սահմանափակումը, եթե
անգամ այն միտված է նրանց օգուտ բերելուն: Եթե իսպանացուն հիշեցնես վաղուց ծրագրված գործի
մասին, ապա որպես պատասխան կլսես «մանյանա»(mañana)՝ «վաղը» կամ, այս դեպքում՝ «մի ուրիշ
անգամ»: Իրեն նմանատիպ պահվածք կարող է թույլ տալ ցանկացածը՝ անկախ
պարտականություններից և սոցիալական դիրքից:


Աղբյուրները՝ [Испанский менталитет](#)



Նինա Մամարյան (12-րդ դասարան)

Day tripper. Հարուկի Մուրակամի

Ես երեսուներկու տարեկան եմ, նա՝ տասնութ: Եկեք ուրիշ տեսանկյունից նայենք: Ես ընդամենը երեսուն տարեկան եմ, նա՝ արդեն տասնութ: Այսպես ավելի լավ է: Կարելի է ասել՝ մենք ընկերներ ենք: Ոչ ավել, ոչ պակաս: Ես կին ունեմ, նա՝ վեց բոյֆրենդ: Նրանց հետ հանդիպում է շաբաթվա աշխատանքային օրերին, իսկ ինձ հետ՝ ամսվա մեջ մի անգամ՝ կիրակի օրը: Մնացած կիրակիները հեռուստացույցի առջև է անցկացնում: Երբ հեռուստացույց է դիտում, փոկի է նմանվում, էդքան լավիկն է:



Նա ծնվել է 1963 թվականին, հենց այն նույն տարում, երբ սպանեցին Քեննեդիին: Եվ երբ ես առաջինանգամ աղջկա հետ հանդիպման գնացի: Ո՞ր երգն էր այն ժամանակ հիթային: Կարծեմ՝ Քլիֆֆ Ռիչարդի «Ամառային արձակուրդները»:

Չնայած, ինչ տարբերություն... Այսպես, թե այնպես, դա այն տարին էր, երբ ծնվեց նա:

Իհարկե, այն ժամանակ մտքովս էլ չէր անցնի, որ մի օր կհանդիպեմ 63 թվականին ծնված աղջկա հետ: Չնայած, հիմա էլ չեմ դադարում զարմանալ դրա վրա: Այնպիսի տպավորություն է, թե լուսնի հակառակ կողմն եմ հասել միայն ծխելու համար: Իմ ընկերների շրջանակում ընդունված է կարծել, որ ջահել աղջիկները ձանձրալի են: Չնայած դրան, շատերն ունեն երիտասարդ ընկերուհիներ: Կարծում եք՝ հետաքրքիր՞ ր աղջիկ են գտել: Չհավատաք: Փաստն այն է, որ հենց ձանձրույթն է նրանց գրավում: Նրանք ինչ-որ տարօրինակ խաղ են խաղում՝ լողում են ձանձրույթի մեջ, դույլերով շրջում այն իրենց վրա, ընդ որում, այնպես, որ իրենց ընկերուհիների վրա կաթիլ անգամ չընկնի, և դրանից իսկական հաճույք են ստանում:

Համենայնդեպս, ինձ այդպես է թվում:

Իսկապես որ, աղջկների տասից ինը տխուր են, տրտում, ձևական: Իհարկե, իրենք դա չեն նկատում: Ջահել ենք, սիրուն, հետաքրքրասեր... «Ի՞նչ կապ ունի ձանձրույթը մեզ հետ, մենք էդպիսին չենք», - մտածում են նրանք: Հա, հա, հա:

Ես աղջիկներին ոչ մի բանում չեմ մեղադրում ու վատ էլ չեմ վերաբերվում նրանց: Ընդհակառակը՝ սիրում եմ: Նրանք ինձ հիշեցնում են այն ժամանակները, երբ ես ինքս էի ջահել, միաբջիջ արարած: Ու դա...ինչպես ասեմ... հաճելի է:

–Լսիր, կուզենայի՞ր նորից տասնութ տարեկան լինել,-հարցնում է նա ինձ:

–Չէ, - պատասխանում եմ,- չէի ուզի:

Թվում է՝ չի հասկանում:

–Իսկապես՝ չես ուզո՞ւմ:

- Իհարկե:

–Ինչո՞ւ :

– Ես ինձ այսպես էլ եմ լավ զգում:

Նա նստած է՝ արմունկները սեղանին հենած, գլուխն էլ ձեռքին, զրնգացնում է գրալով՝ մտախոհ խառնելով սուրճը:

-Ինչ-որ, չեմ հավատում:

-Իսկ դու փորձիր:

-Բայց զիլ բան է, չէ՞, ջահել լինելը:

-Երևի:

-Բա ինչո՞ւ չես ուզում:

-Մի անգամը հերիք է:

-Իսկ ինձ հերիք չէ:

-Դու ընդամենը տասնութ տարեկան ես:

-Հըմ...

Կանչում եմ մատուցողուհուն, խնդրում էլի գարեջուր բերել: Անձրևում է: Պատուհանից տեսարանը բացվում է Յոկոհոմայի նավահանգստի վրա:

-Իսկ, ինչի՞ մասին էիր մտածում, երբ տասնութ էիր:

-Թե ինչպես սրա-նրա ծոցը մտնեմ:

-Է՛լ:

-Դա էր, էլի:

Քրքջալով՝ մի կում արեց:

- Եվ ի՞նչ, ստացվո՞ւմ էր:

-Նայած երբ, հիմնականում, իհարկե, չէր ստացվում:

-Ու քանիսի՞ հետ քնեցիր:

-Չեմ հաշվել:

-Ինչու՞:

- Չէի ուզում:

-Ես լինեի՞ կհաշվեիր: Դա հենց ամենահաճելի մասն է, չէ՞:

Այնուամենայնիվ, նորից տասնութ տարեկան լինելու մասին մտքերը երբեմն ծագում են: Ի՞նչ կանեի այդ ժամանակ առաջին հերթին: Չեմ էլ պատկերացնում: Միգուցե սկսեի հանդիպել մի երեսուներկուամյա հմայիչ կնոջ հետ: Վատ չէր լինի: Ես կհարցնեի նրան.

-Երբևիցե ուզե՞լ ես նորից տասնութ տարեկան լինել:

-Հըմ, չէ երևի,-մտախոհ կժպտար նա:

-Ճի՞շտ:

-Հա:

-Չեմ հասկանում,- կզարմանայի ես:- Բոլորն ասում են, թե ջահել լինելը զիլ բան է:

-Էդպես էլ կա:

- Բա ինչո՞ւ չես ուզում:

- Իմ տարիքին հասնես՝ կհասկանաս:

Բայց իհարկե, ես երեսուներկու տարեկան եմ: Մի շաբաթ է՝ մարզվելու ժամանակ չեմ գտնում, ծուլանում եմ: Փոր եմ զցել: Ջահելությունն էլ հետ չես բերի:

Առավոտյան մարզանքից հետո մի բաժակ բանջարեղենի հյութ եմ խմում, հարմար տեղավորվում բազկաթոռին ու միացնում Բիթլզի «Day Tripper»-ը:

— Da a ay tripper...

Այս երգը լսելիս ինձ գնացքի վագոնում եմ պատկերացնում: Պատուհանից այն կողմ երևում են հեռախոսակապի սյուները, կանգառները, թունելները, կամուրջները, աչքերիս առջևից թռչում են կովերը, ձիերը, գործարանային խողովակները, հազար ու մի բան... Որ ուղղությամբ էլ գնաս, միշտ նույն տեսարանն է: Առաջ բնապատկերներն ավելի հետաքրքիր էին: Վագոնում միայն հարևաններդ են փոխվում: Օրինակ, անցած անգամ, մի տասնութամյա աղջիկ էր նստած: Իմ տեղը պատուհանի մոտ էր, նրանք՝ մուտքի:

–Ուզո՞ւմ եք տեղերով փոխվենք , - առաջարկեցի ես:

– Շնորհակալ եմ,- ասաց նա: -Դուք շատ բարի եք:

Բարությունն այստեղ կապ չունի, քթիս տակ ծիծաղեցի: Ուղղակի, ես ձանձրությամբ ավելի սովոր եմ: Երեսներկուամյա day tripper, մարդ, որ հոգնել է հաշվել հեռախոսակապի սյուները:

Աղբյուրը



Վարորդ վամպիրը. Հարուկի Մուրակամի

Անհաջողությունները մարդու վրա իրար հետևից թափվելու սովորություն ունեն: Ասում են՝ դժբախտությունը մենակ չի գալիս: Իսկ եթե իսկապես ամեն ինչ վա՞տ է: Ուրեմն, դա ընդամենը ժողովրդական իմաստություն չէ:

Ամեն ինչ թարս է. պայմանավորվել էի հանդիպել ընկերուհուս հետ, բայց նա չեկավ, վերարկուիս կոճակը պոկվեց, գնացքում հանդիպեցի էնպիսի մեկին, որին չէի ուզի տեսնել, ատամս ցավեց, անձրև եկավ, տաքսի նստեցի,

իսկ ճանապարհը խցանված էր. ինչ-որ տեղ վթար է եղել: Եթե մեկն այս պահին ինձ հիշեցներ ժողովրդի իմաստության մասին, հաստատ դեմքին կհասցնեի:

Երևի դուք էլ նույնը կանեիք:

Հենց դա է ժողովրդի իմաստությունը: Հենց այդ պատճառով էլ մարդկանց հետ դժվար է: Երբեմն մտածում ես. լավ չէ՞ր լինի՝ մուտքի դռան առաջ գցած գորգ լինեիր: Ամբողջ կյանքում կպառկեիր քեզ համար:

Բայց գորգերն էլ իրենց իմաստությունն ու իրենց պրորբեմներն ունեն: Չնայած՝ դա արդեն իմ գործը չէ:

Կարճ ասած, տաքսի նստեցի ու խցանման մեջ ընկա: Աշնանային անձրևը թխկթխկում էր մետաղի վրա, հաշվիչի կտկտոցը հրազենից արձակված գնդակի նման ծակում էր ուղեդս:

Էհ:

Բացի այդ՝ երեք օր է, ինչ թողել եմ ծխելը: Գոնե մի հաճելի բանի մասին մտածեի: Ո՞նց չէ: Անելանելի վիճակից սկսեցի մտքումս ընկերուհուս շորերը հանել: Հերթով.... սկզբից հանում ենք ակնոցը, ժամացույցը, թևնոցը, հետո...

–Ներողություն:- Ես արդեն բլուզի առաջին կոճակին էի հասել, երբ հանկարծ վարորդի ձայնը լսեցի:

--Ի՞նչ եք կարծում, վամպիրները գոյություն ունե՞ն:

– Վամպիրե՞ր , - ես շշմած նայեցի հայելուն, որտեղ վարորդի դեմքն էր արտացոլվում:

-Ի՞նչ վամպիրներ, որ արյո՞ւն են խմում:

- Այ հենց նրանք: Գոյություն ունեն, թե՞ չէ:
- Դուք ընդհանրապես ո՞ւմ նկատի ունեք: Մարդկանց, որոնք վամպիրյան կենսակերպ ունեն, փոխաբերակա՞ն իմաստով վամպիրներին, արնախում չղջինների՞ն, թե սարսափ ֆիլմերի վամպիրներին: Թե՞ իսկական:
- Իսկականներին, իհարկե,- ասաց վարորդը: Մեքենան կես մետր շարժվեց:
- Ուրեմն՝ չգիտեմ,-պատասխանեցի ես:-Տեղյակ չեմ:
- Չէ, էդպես չի լինի: Դուք ասեք, հավատո՞ւմ եք, թե՞ չէ:
- Չեմ հավատում:
- Ուրեմն, չե՞ք հավատում:
- Չեմ հավատում:
- Գրպանիցս ծխախոտ հանեցի, առանց վառելու դրեցի բերանս:
- Իսկ ուրվականներին հավատո՞ւմ եք:
- Այ, ուրվականներն, ինձ թվում է, կան:
- Թվում է... Ասեք «հա» կամ «չէ»...
- Հա,- միայն սա էր մնում ասել,-հավատում եմ:
- Ուրվականներին, ուրեմն, հավատում եք:
- Հավատում եմ:
- Իսկ վամպիրներին՝ չէ:
- Չէ, չեմ հավատում:
- Եվ ինչո՞վ է ուրվականը վամպիրից տարբերվում:
- Ուրվականը ֆիզիկական գոյության անտիթեզիսն է,-առանց մտածելու դուրս տվեցի ես: Դա ես լավ եմ կարողանում:
- Հըմ:
- Իսկ վամպիրը արժեքային համակարգի փոփոխությունն է մարմնի առանցքի շուրջ:
- Դուրս է գալիս՝ անտիթեզիսը դուք ընդունում եք, իսկ արժեքների փափխությունը՝ չէ:
- Մի անգամ էդպիսի մի հիմարության հավատաս, էլ երբեք կանգ չես առնի:
- Դուք կրթված մարդ եք:
- Հա-հա-հա... Յոթ տարի ինստիտուտում եմ սովորել ,- ծիծաղեցի:
- Մեքենաների անվերջ շարանին նայելով՝ վարորդը ծխախոտը դրեց բերանն ու ծխեց: Սրահը լցվեց ֆիլտրի հոտով:
- Իսկ ի՞նչ կանեիք, եթե իսկապես վամպիր տեսնեիք:
- Երևի իրար կխառնվեի:
- Եվ վե՞րջ:
- Իսկ ինչ է, չի՞ կարելի:
- Չի կարելի, իհարկե: Հավատը ուժեղ բան է: Պատկերացրու սարը, ահա այն: Մտածես, որ չկա, չի լինի:
- Ինչպես Դոնովանի հին երգում:
- Ահ, ահա, թե ինչ եք ասում:
- Հա, հա:
- Ես շունչ քաշեցի՝ չվառած ծխախոտը բերնիցս բաց չթողնելով:
- Իսկ դուք ինքներդ հավատո՞ւմ եք վամպիրերին:
- Հավատում եմ:

–Ինչու՞ :

–Ի՞նչ է նշանակում «ինչու»: Ուղղակի հավատում եմ:

–Իսկ ապացուցել կարո՞ղ եք:

–Հավատքն ու ապացույցը ընդհանրապես տարբեր բաներ են:

–Երևի:

Ես որոշեցի էլ չխորանալ ու վերադառնալ բլուզի կոճակներին: Առաջինը, երկրորդը, երրորդը...

–Բայց ապացուցել էլ կարող եմ:

– Իսկապե՞ս:

–Լիովին:

– Իսկ ինչպե՞ս:

–Դե, ինքս էլ վամպիր եմ:

Լռեցինք: Մեքենան հինգ մետրի չափ առաջ սողաց: Անձրևի կաթիլները առաջվա նման կտկտում էին, հաշվիչը հազար հինգ հարյուրից ավել էր ցույց տալիս...

–Հրահան կտա՞ք:

–Խնդրեմ: Ես չկկացրի սպիտակ «Բիկ» լուցիչն ու թոքերս քաշեցի նիկոտինը: Երեք օրվա մեջ առաջին անգամ:

–Ինչ էլ խցանում է,-գանգատվեց վարորդը:

–Էհ... Ի դեպ, վամպիրների մասին...

–Ի՞նչ:

– Դուք իսկապես վամպիր եք:

–Իհարկե, ինչու՞ պետք է խաբեի:

–Ու վաղո՞ւց եք էդպես:

–Արդեն ինը տարի: Էդ տարի օլիմպիական Սյունիսենում էր:

–Մի հարց տա՞մ:

–Հա, բա ո՞նց, տուր:

–Իսկ ինչու՞ եք ...ըըը.. տաքսի քշում:

— Չեմ սիրում էդ վամպիրկան ձևերը: Վերարկու հագնել, կառքով շրջել, դոյակում ապրել...Ոչ մի օգուտ: Ես ինձ սովորական եմ պահում. հարկերն եմ մուծում, երաշխավորագիր էլ ունեմ:

Դիսկոտեկներ եմ գնում, պատիճկո խաղալու... Ի՞նչ: Տարօրինա՞կ է:

–Չէ: Ուղղակի ...ինչպե՞ս ասեմ է... մի տեսակ տեղ չի հասնում:

–Ուրեմն, չե՞ք հավատում:

—Հըմ:

—Չե՞ք հավատում, որ վամպիր եմ:

–Իհարկե հավատում եմ,- հավատացրեցի ես վարորդին:- Որ հավատաս, թե սար կա դիմացդ, սարը կլինի:

—Լավ:

–Արյուն էլ եք խմո՞ւմ:

— Իհարկե: Վերջիվերջո վամպիր եմ, չէ՞:

— Արյունը երևի տարբեր տեսակի է լինում՝ համեղ, անհամ:

— Դե պարզ է էլի: Բայց ձերը չի լինի: Շատ եք ծխում:

–Ուզում էի թողնել, բայց տեսնում եք, որ չի ստացվում:

–Ամենալավը ջահել աղջիկներինն է: Այ դա բան է:

—Ինձ թվում է՝ ես ձեզ հասկանում եմ: Իսկ դերասանուհիների՞նք:

—Կայոկո Կասիմոտոյինը ուղղակի հրաշք է: Կիմիե Սինգյոձիինն էլ վատը չէ: Բայց այ Կաօրի Մոմոինը էնքան էլ չէ: Մի տեսակ չի էլ ձգում:

—Երևի հաճելի կլինեն նրանց արյունը խմելը:

– Իրական հաճույք:

Տասնհինգ րոպե հետո բաժանվեցինք: Բացելով տան դուռը՝ վառեցի լույսը, սառնարանից հանեցի մի շիշ գարեջուր: Խմեցի ու զանգեցի էն ընկերուհուս, որին էդպես էլ չհանդիպեցի: Եթե իրեն լսենք՝ լուրջ պատճառ կար: Էսպիսի բաներ...

–Խորհուրդ կտամ Ներիմայի համարներով սև տաքսիները չնստել:

–Ինչու՞, - հարցրեց նա:

— Վարորդներից մեկը վամպիր է:

- Չէ-հա՞:

–Հաստատ:

– Չլինի՞ մտահոգվում ես ինձ համար:

—Դե իհարկե՝ անհանգստանում եմ:

—Մե, Ներիմայի համարներով:

—Ըհը:

—Շնորհակալ եմ:

—Պետք չէ:

—Դե, ուրեմն, բարի գիշեր:

—Բարի:

Աղբյուրը





Գոհար Մահակյան (11-րդ դասարան)

Ավստրալիական դաստիարակություն՝ դասերը կսպասեն.

Ավստրալիական մանկավարժության գլխավոր սկզբունքներից մեկն է՝ թույլ տալ երեխային մեծանալ ազատ՝ առանց ստիպելու, առանց արգելելու և առանց շտապեցնելու: Դեռ փոքրուց ամեն մարդ համարվում է յուրահատուկ, իսկ դա նշանակում է՝ նա ինքը ընդունակ է ընտրելու իր զարգացման ճանապարհը:

Վաղ մանկություն

Խոսքի վաղ զարգացում՝ դա այն չէ, ինչ ավստրալիացի ծնողները ցանկանում են իրենց երեխաների համար: Ոչ մի հատուկ երգեր և ոտանավորներ, ոչ մի «Գող կաշաղակը ճաշիկ էր եփում»: Ավելի հաճախ նորածինների հետ խոսում են ժեստերի միջոցով, իսկ եթե մինչև երեք տարեկանը երեխան չի խոսում, դա չի անհանգստացնում ոչ ոքի. ուրեմն այդպես ավելի հարմար է: Մանկապարտեզ գնում են արդեն խոսող՝ չորս տարեկան երեխաները, բայց այնտեղ նույնպես առանձնապես ոչինչ չեն սովորեցնում: Համարվում է, որ վաղ ուսուցումը կարող է խանգարել երեխայի յուրահատկությանը, իսկ ավստրալիացիների համար կարևոր է, որ երեխան իրեն պահի այնպես, ինչպես ինքն է ցանկանում և շտապելու բան չունենա: Մանկապարտեզում երեխաները ծեփում են, նկարում են, խաղում են , ընդ որում, ծնողները աշխատում են երեխաներին հագցնել հնարավորինս վատ, որովհետև այնտեղ թույլատրվում է գետնին թավալ գալ, գրպանները ցեխ ու տերևներ լցնել, նկարել իրենց ու մյուսների հագուստին: Դաստիարակները հետևում են երեխաների խաղին, բայց մասնակցում են բացառիկ դեպքերում, երբ ինչ-որ բան երեխան չի կարողանում անել և նա սկսում է վրդովվել: Ողջունելի են ագրեսիվ խաղերը, որոնցում երեխաները միմյանց «կրակում են» ասորձանակներից ու հրացաններից: Համարվում է, որ դրանք օգնում են երեխային պատրաստվել հասուն կյանքին:

Ի՞նչն է ընդունելի. երեխաներին չարգելել խաղալ տերևների և քարերի հետ՝ բնության հետ շփումը կեղտոտված շորերից կարևոր է: Չանհանգստանալ, որ երեխան սիրում է խաղալիք զենքեր և «կռիվ-կռիվ» խաղալ. այդպես նա դուրս է նետում ավելորդ ագրեսիան. նկատել երեխաների յուրատարբությունները և թույլ տալ դրանք դրսևորելու:

Ուսումը

Դպրոցում հիմնականում ուշադրություն են դարձնում, որ բացահայտեն սովորողի հետաքրքրություններն ու ընդունակությունները և օգնեն նրանց առավելագույնս զարգանալու, բայց չեն մոռանում ո՛չ մարմնի և ո՛չ հոգու մասին: Ավստրալիական դպրոցներում շատ ժամանակ է տրամադրվում սպորտին և անհատականության դաստիարակությանը, որտեղ ուսուցիչները աշակերտների հետ քննարկում են՝ ինչ է արդարությունը, համարձակությունը, բարությունը: Որոշ դպրոցներում կազմակերպվում են գրադարանային օրեր, երբ երեխաները գնում են դպրոցական գրադարան և ինքնուրույն կարդում են, կամ նստում են շուրջանակի, իսկ գրադարանավարուհին

նրանց համար կարողում է ինչ-որ հետաքրքիր գիրք:

Մերը ընթերցանության նկատմամբ Ավստրալիայում խրախուսվում է: Շրջանային գրադարաններում նույնպես անցկացվում են «մանկական ժամեր», երբ կազմակերպվում են բարձրաձայն ընթերցումներ: Կրտսեր և միջին դպրոցներում ծանրաբեռնվածությունը այդքան էլ շատ չէ, բայց մոտ 14 տարեկանից այն մեծանում է: Իսկ ավարտական դասարաններում առարկաները պակասում են: Հումանիտար թե բնագիտական ուղղությունը սովորողները ընտրում են ինքնուրույն:

Ի՞նչն է ընդունելի. ավելի շատ խոսել երեխայի հետ այն բաների մասին, որոնք լուծված խնդիրներից կարևոր են նրա զարգացման համար՝ իմաստության, արդարության մասին, այն մասին, թե ինչ է նա հասկանում երջանկությունն ասելով: Երեխայի համար բարձրաձայն կարդալը, նույնիսկ այն դեպքում, երբ նա կարողանում է կարդալ, շատ է մտերմացնում:

Մեծերի հետ շփումը

Ավստրալիացի երեխաների իրավունքները շատ են, և նրանք դրանց մասին իմանում են դպրոցական փոքր հասակից: Ուսուցիչները ասում են նրանց, որ կարող են բողոքել ծնողներից, եթե նրանք նեղացնում կամ ճնշում են: Մեծերը երեխաների վրա ձայնը չեն բարձրացնում, իսկ ապտակելու մասին խոսք չի կարող լինել: Հավանական է, որ այդ դեպքում երեխային վերցնեն սոցիալական կազմակերպությունները: Իսկ եթե դպրոցականը չի ցանականում կատարել տնային աշխատանքները, այլ դրա փոխարեն համակարգչային խաղեր է խաղում կամ հեռուստացույց դիտում, ծնողները չեն ստիպում կատարել տնային հանձնարարությունները. չէ՞ որ նա ինքն է արել իր ընտրությունը:

Ի՞նչն է ընդունելի: Թույլատրել աշակերտին երեկոն անցկացնել այնպես, ինչպես ինքն է ցանկանում, և չհիշեցնել դասերի մասին: Հաջորդ օրը նա ինքը կհամոզվի, որ ավելի լավ կլինե՞ր դասերը սովորեր ժամանակին:

Բոլոր երեխաները հավասար են

Ավստրալիան բազմազգ երկիր է, այնտեղ ապրում են շատ ներգաղթյալներ, և ամեն տարվա հետ նրանց քանակը ավելանում է: Դպրոցներում շատ են խոսում ռասիզմի մասին՝ համոզելով վերաբերվել մարդանց նույն կերպ՝ չկարևորելով նրանց ազգությունը կամ մաշկի գույնը: Ուսուցիչները տարբեր երկրներից եկած երեխաներին առաջարկում են պատմել իրենց հարազատ քաղաքի և ավանդույթների մասին: Դա թողնում է իր աղդեցությունը՝ ներգաղթածների հետ սոցիոլոգիական հարցումները ցույց են տվել, որ ավստրալիացի երեխաները հեշտ են շփում հաստատում իրենց հասկակիցների հետ: Օրինակ՝ Անգլիայում և ԱՄՆ-ում բոլորովին էլ այդպես չէ:


Ինչն է ընդունելի: Երեխաներին պատմել, որ տարբեր տեղերում մարդիկ տարբեր կերպ են ապրում, որ պետք է հարգել ոչ միայն սեփական, այլև ուրիշների ավանդույթները: Եթե երեխաներն ուրիշ ազգի ընկերներ ունեն, առաջարկել նրանց մի հետաքրքիր բան պատմել իրենց ժողովրդի մասին ու հետո լսել, թե ձեր ազգության մասին ինչ է պատմում ձեր երեխանը:

Աղբյուր

Աշոտ Փաշինյան (11-րդ դասարան)

Աֆորիզմներ Էռնեստ Հեմինգուեյից

- Այն ինչը, որ գրողը ուզում է ասել, չպետք է ասի, այլ պետք է գրի:
- Խելացի մարդիկ չափազանց հազվադեպ են երջանիկ լինում:
- Չկա աշխարհում ավելի դժվար գործ, քան գրելը սովորական, արդար, արձակ մարդու մասին:
- Բոլոր լավ գրքերը նման են իրար. դրանք կյանքից իրական են:
- Ուրախ մարդիկ հիմնականում ամենահամարձակ մարդիկ են, ովքեր գոհվում են առաջինը:
- Ամբողջ ամերիկյան գրականությունը սերել է «Հեքիաթների Ֆիննից»:
- Ինչո՞ւ մենք պետք է ապրենք ընդհանուր օրենքներով: Մենք մենք ենք, չէ՞:
- Կուբայական հեղափոխությունը պատմական անհրաժեշտություն էր:
- Ֆաշիզմը հայտնի ավագակների սուտն է:
- Յուրաքանչյուրը, ով քայլում է Երկիր մոլորակի վրա, ունի իր պարտականությունը կյանքում:



Աղբյուրը



Երջանկությունը՝ գիտական տեսնկյունից

Կարինե Գևորգյան (11-րդ դասարան)

Ինչքան ավելի շատ է մարդ ձգտում երջանկությանը, այնքան ավելի է դրանից հեռանում:

Հաճախ երջանկություն անվանում են ուրախության ամենաբարձր վիճակը, խորը բավականություն նրանից, որ դրված նպատակը նվաճված է: Եվ քանի որ ցանկություններն ու նպատակները բոլորիս մոտ տարբեր են, երջանկությունը նույնպես հասկացվում է տարբեր ձևերով: Հին ժամանակներից մտածողները վիճել են միմյանց հետ՝ փորձելով հասկանալ, թե ինչ է երջանկությունը, ինչպես է հնարավոր դրան հասնել, և ինչն է մարդկանց երջանկացնում կամ դժբախտացնում:

Երջանկությունը՝ փիլիսոփայության մեջ

Անտիկ փիլիսոփայության մեջ գոյություն ունեւ երջանկության երկու հիմնական պատկերացում: Գեդոնիստիկ ուղղությունը (հիմնել է Արիստիպպը), որում երջանկությունը վայրկյանական բավականությունն ու հաճույքն է, հաճույքը, որպես մարդու նպատակ, և էվդեմոնիստիկ ուղղությունը (էվդեմոնիա տերմինը ստեղծել է Արիստոտելը), որում երջանկությունը ձգտումն է հստակ ու ամբողջական բարեկեցության, երջանկությունը՝ ինչպես մոտիվ և նպատակ մարդու բոլոր ձգտումների: Ընդ որում էվդեմոնիստիկ երջանկության համար պարտադիր է արտաքին գործոնը, արտաքին գնահատանքը կողքից, այսինքն՝ տվյալ ուղղությունը օբյեկտիվ է: Էվդեմոնիստիկ ուղղության օբյեկտիվության այս դրույթը հաստատվում է eudaimonia բառի բացատրությամբ, որը նշանակում է «մարդու ճակատագիրը աստվածների հովանու ներքո»: Օբյեկտիվություն, այս դեպքում, նշանակում է արտաքին՝ աստվածային կամ պատահական գործոնի ներկայությունը, որը երջանկության զգացողություն է ստեղծում:

Երջանկության կենսաբանական կողմը

Երջանկության և բարեկեցության զգացումների վրա ազդեցություն ունեցող գործոնը՝ նեյրոգիտության սահմաններում, դոֆամին, էնդորֆին և սերոտոնին հորմոնների աստիճանն է գլխուղեղի մեջ: Մեր, ստեղծագործական համբավ, իշխանություն, յուրաքանչյուր ապրում, կապված այս և շատ ուրիշ մարդկանց կատեգորիաների հետ բարձրացնում են այս երեք հորմոնները արյան մեջ:

Մերոտոնինը նպաստում է էմոցիոնալ դրական տրամադրությամբ: Դրա պակասի դեպքում խախտվում է քունը, սկսվում է դեպրեսիա (մտքերը հաճախ հասնում են ինքնասպանության): Դոֆամինը համարվում է մոտիվացիայի հորմոն: Առանց դրա մենք դառնում ենք թափթփած, անկայուն ու պասիվ: Էնդորֆինն անվանում են երջանկության կամ ուրախության հորմոն: Էնդորֆինը ոչ միայն վանում է ստրեսը և վատ տրամադրությունը, այլև ազատում է ցավից ու հոգնածությունից:

Երջանկությունն ըստ հոգեբանների

Այն իրավիճակը, երբ մարդ կարճ ժամանակով ձեռք է բերում երջանիկ անձի հատկանիշներ, Մաալթուն անվանել է «պիկային ապրումներ»: Երբ աշխարհը երևում է ամբողջովին, առանց կապվածության այս պահի հետ, մարդ մոռանում է իր «ես» - ի մասին, հայտնվում է իրականությունից և ժամանակից դուրս, սուր է զգում շրջակա աշխարհի պոզիտիվ կողմերը՝ ճիշտը, բարին, գեղեցկությունը, արդարությունը և այլն: Կարևորն այն է, որ այդ պահերին մարդ իրեն զգում է նպատակասլաց, պատասխանատու և արժանի վստահության: Դրա հետ մեկտեղ "պիկային ապրումները" իրենց մեջ կրում են նաև վտանգ՝ օրինակ թմրանյութեր օգտագործելը, որպես վառ ապրումների հասնելու միջոց:

Ֆրանկլը իր հոգեթերապիային (logotherapy) մոտեցման համատեքստում հակադրում էր զգայական հաճույքի իմաստի ձեռքբերմանը: Նա դեմ էր գնում հոգեկան կյանքում հաճույքի սկզբունքի գերիշխող նշանակության մասին Ջ.Ֆրեյդի ուսմունքներին, որոշելով, որ հաճույքը նպատակ չէ, այլ մեր ցանկությունները բավարարելու արդյունք է: Իր տեսակետից իրականում մարդ ձգտում է ոչ թե դեպի երջանկությունը, այլ դեպի դրա իմաստն ու սկզբունքը: Իմաստը դիտվում է նրա կողմից որպես հիմք իրական երջանկության:

Կա՞րողոք ավելի մեծ հաճույք, քան ստեղծագործելը:

Ն.Գոլգոլ

[Աղբյուրը](#)





Նարե Ղալամքարյան (10-րդ դասարան)

Պետք է ծովի մոտ ապրել, մամ

-Է՞լ ինչ պատմեմ քեզ՞

Պետք է ծովի մոտ ապրել, մամ, պետք է անել էն, ինչ դուրդ գալիս է ու հնարավորության դեպքում ոչինչ չբարդացնել: Ընդամենը ընտրության հարց է, մամ. ամիսներով տանջել ինքդ քեզ նրա համար, ինչ արված չէ, բաց է թողնված, ծախսված է հենց էնպես, թե՞ որոշել, որ մնացած կյանքը հերիք է ամեն ինչ հասցնելու համար և գործի անցնել: Ամբողջ հարյուրամյակ սողցել մտերիմ մարդուն նրա համար, թե որքան հիմար,

անշնորհք ոչնչություն է նա, թե՞ սկսել գովել փոքրիկ ձեռքբերումների և հաղթանակների առիթով, որպեսզի նա ծաղկի ու զգա սեփական պետքականությունը: Եթե, միևնույն է, իր հետ ես ու սիրում ես, ինչո՞ւ պղտորես նրա ու քո արյունը:

Ասել «իհարկե, դու կթողնես ինձ», և հանդիսավոր բացականչել՝ «էդպես էլ գիտեի», երբ կթողնի, թե՞ ընդհանրապես չմտածել դրա մասին, ուրախանալ միասին գոյություն ունենալու փաստով, միասին հիմարություններ ու բացահայտումներ անել և սիրելի մարդու մեջ անցք չկրծել նրա համար, ինչ լինելու է կամ չի լինելու:

Միշտ ասել՝ «ես չեմ կարողանա», «հիմարություն է անգամ սկսելը», թե՞ մի անգամ թքել ամեն ինչի վրա և փորձել: Եվ նույնիսկ, եթե չստացվի, ուրիշ եղանակ գտնել ու նորից փորձել՞

Ամեն մեկին, ով քեզ դուր է գալիս, դիտավորյալ համարել հիմար, սադիստ, ձեռքերը ծալել կրծքի վրա, հեզնել ու քմծիծաղ տալ, ասել՝ «դե, համոզիր ինձ», թե՞ մի անգամ հանձնվել ու ասել. «Լսիր, ես սարսափում եմ նրանից, թե որքան իշխանություն ունես ինձ վրա, դու սքանչելի ես, արի խոսենք»՞

Միշտ լինել համառ-ճշմարիտ, ինչպես ասում է Ալյոնան, և երկու քայլով միայն հասկացնել, թե ով է էստեղ բոսն ու արդյունքում մնալ մենակ քո հիմար ճշմարտացիությամբ, թե՞ մի անգամ կուլ տալ գոռոզությունը, առաջինը գալ հաշտվելու ու ասել՝ «ես պատրաստ եմ քեզ լսելու, բացատրիր ինձ՝ ի՞նչ է կատարվում», եթե միևնույն է, մտածում ես դրա մասին ամբողջ օրը: Լինել հպարտ ու ճակատագրի կողմից շրջանցված, Ոչ-Ոք-Ինձ-Չի-Միրում-2009, թե՞ խորը շնչել ու օգնություն խնդրել, երբ անհրաժեշտ է ու որ ամենաանհավանականն է՝ ստանալ օգնություն՞ Տարիներով ատել այն պատճառով, որ քեզ հետ անարդար են վարվել, թե՞, եթե դա քեզ այդքան տանջում է՝ մի անգամ զանգահարել ու հարցնել բոլոր ձայներից ամենահանգիստով. «Լսիր, չեմ կարողանում հասկանալ, ինչո՞ւ»՞

Քսան տարի սզալ կորած սիրո համար, թե՞ կամքը հավաքել, թույլ տալ ինքդ քեզ նորից վստահել, բացվել, հարաբերություններ ստեղծել ու երջանիկ լինել: Երկրորդում իմ կարծիքով շատ ավելի խիզախություն կա, քան առաջինում, առաջինի համար ընդհանրապես ոչ մի հոգևոր ճիգեր չեն պահանջվում:

Ինքդ քո մասին սրիկայություն կարդալ ու վշտանալ մի շաբաթով, թե՞ ուսերը թոթվել ու մտածել, թե որքան անկեղծ ցավակցում ես գրողին:

Տանջվել ու մտածել, որ աշխարհը Մատրիցայի Ճարտարապետի զարշելի կատակ է, ցույց տալ սպիները ինչպես շքանշաններ, տխուր հեզնել քո դրության անհուսության մասին, թե՛ սկսել խոստովանել ինքդ քեզ, որ համեղը համեղ է, տաքը ջերմացնում է, գեղեցիկը ստիպում է աչքերին հրճվել, լավերը ժպտում են, բարիները պատրաստ են ունեցածը քեզ հետ կիսելու, ու ոչ թե այդ ամենը միասին երկնային ծաղրանք է, ևս մի միջոց՝ քեզ նվաստացնելու համար:

...Աստված իմ, էդ էնքան հեշտ է, մամ, դրանից ամենակարողության էնպես արբեցնող զգացում ես ունենում, չեմ հասկանում, ինչո՞ւ դա բոլորի համար այնքան ակնհայտ չէ, որքան ինձ համար:

Աշխարհում ամեն ինչ ուղղակի ընտրության հարց է, ոչ ավելի: Գոյություն չունի ոչ մի կանխորոշում, նախասահմանություն, անհաղթահարելի բարձունք, դու ես քո կոշիկի միջի մեխը, վատ օրինակը, դու ես ընտրել խղճուկ, անպիտան ու միայնակ, թե երջանիկ ու պետքական լինելը, ոչ ոք քո փոխարեն չի որոշել, ոչ ոք ընդունակ չէ՝ քո փոխարեն որոշելու, եթե դու դեմ ես դրան:

Եթե քեզ համար ավելի հարմար է մտածել էդպես, որպեսզի ոչինչ չձեռնարկես, ապրիր, ինչպես ապրել ես, միայն թե չհամարձակվես բողոքել հանգամանքներից, աշխարհում, որտեղ մարդիկ էվերեստներ են նվաճում, մուլտի-պլատին սկավառակներ են գրում ու պաշարումով գրավում են ամենաանմատչելի գեղեցկուհիներին, դու իրավունք չունես ասելու, թե ինչ-որ բան նույնիսկ տեսականորեն անհնար է:

Այո, դրա համար պետք է կամք ունենալ, պետք է ընդամենը ընտրել ու ընտրությանդ մինչև վերջ հավատարիմ լինել, ընդամենը: Տիեզերքը ճկուն ու զգայուն նյութ է, ու թեկուզև դրանից կարելի է Մատթեոսի հրապարակ, թեկուզ Սոլնցևո համայնքը քանդակել, դու միակն ես, ով պիտի ընտրի՝ ինչ քանդակել:

Ես մտածում էի, որ սա գործում է ցանկացած նյութական առարկայի, բայց ոչ մարդկանց դեպքում: Գումար ես ուզում՝ կլինի, փառք՝ կընկնի, ճամփորդություն՝ միայն երթուղին նշանակիր, բայց վերջին շաբաթների իրադարձություններն ապացուցում են, մամ, որ մարդկանց հետ էլ նույն պատմությունն է, եթե լինեն երեք անգամ սառը ժայռեր, ծակծկող աստղեր, ուղղակի դադարիր նրանց ծակծկող աստղեր համարելուց ու մի անգամ խոսիր, ինչպես ինքդ քեզ հետ, այ, կզարմանաս, թե ինչպես ամեն ինչ ուրիշ կդառնա, կփոխակերպվի, մամ...

[Աղբյուրը](#)





Նունե Մովսիսյան (Հայոց լեզվի և գրականության դասավանդող)

Տոլստոյի մանկավարժական հայացքները

1828 թ. սեպտեմբերի 9-ին ծնվել է ռուս անվանի գրող և մտածող [Լև Նիկոլայի Տոլստոյը](#):

Լուսավորական, հրապարակախոս, կրոնական մտածող, ում հեղինակավոր կարծիքն առաջացրել է կրոնաբարոյական նոր հոսանք՝ տոլստոյականություն: Գրել է «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա» վեպերը: Ունի նաև ինքնակենսագրական բնույթի եռագրություն՝ «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդություն»²

Տոլստոյի մանկավարժական հայացքները

Տոլստոյի հիմնադրած Յասնոպոլյանյան դպրոցը պատկանում էր մանկավարժական յուրօրինակ

փորձարկումների թվին: Տոլստոյը, ի հակադրություն գերմանական մանկավարժության դպրոցի, կտրականապես մերժեց ամեն տեսակի կանոնակարգում և կարգապահություն դպրոցում: Նրա կարծիքով, ուսուցման պրոցեսում ամեն ինչ պետք է լինի անհատական՝ ուսուցիչը, և՛ աշակերտը, և՛ նրանց փոխհարաբերությունները: Դասավանդման որոշակի ծրագիր գոյություն չունի: Ուսուցչի միակ խնդիրը երեխաներին հետաքրքրելն էր:

Պարապմունքներն հաջող էին ընթանում: Դրանք վարում էր ինքը՝ Տոլստոյը, մի քանի ուսուցիչների օգնությամբ, ընդհանուր թվով՝ 4 ուսուցիչ: Սովորում էին 7-ից 15 տարեկան 37 երեխա, կային նաև մի քանի մեծահասակներ: Կրթությունն անվճար էր: Պարապմունքները սկսվում էին ժամը 8-ից 12-ը և 15-ից 18-ը: Տոլստոյի մանկավարժության հիմքում ստեղծագործ անհատի դաստիարակությունն էր:

Հիմնարար սկզբունքներից մեկը՝ երեխային լիակատար ազատություն տալը, դա չէր վերաբերում դասաժամերի տևողությանը. դրանք անփոփոխ էին: Տնային աշխատանք չէր հանձնարարվում: Խրախուսվում էր երեխայի ստեղծագործական ակտիվությունն ու նախաձեռնողականությունը:

Տոլստոյի պահանջում էր հաշվի առնել յուրաքանչյուրի հնարավորություններն ու

հետաքրքրությունները: Ուսուցումը տարվում էր «սովորողի պահանջների համաձայն»:

Դպրոցում դասավանդում էին հետևյալ առարկաները՝ ընթերցանություն, վայելչագրություն, քերականություն, մաթեմատիկա, բնագիտություն, նկարչություն, զծագրություն, երգեցողություն, Աստծո խոսք և այլն: Երեկոյան Տոլստոյը երեխաների համար գրքեր էր կարդում՝ «Ռոբինզոն Կրուզո», պատմում էր կազակների, Հաջի Մուրադի, 1812 թ. Հայրենական պատերազմի, ինչպես նաև՝ իր կյանքի դրվագների մասին: Տոլստոյը փորձում էր երեխաներին հայրենասիրություն ներշնչել, հետաքրքրություն առաջացնել սեփական պատմության նկատմամբ: Զբոսանքների ժամանակ առավելապես զրուցում էին բարոյագիտական թեմաների շուրջ: Պարապմունքները շատ հաճախ անցկացվում էին դաշտում, այգում, զբոսայգում: Նրա ղեկավարությամբ երեխաները այցելում էին գյուղեր, գրի առնում բանահյուսական զրույցներ, գրում էին պատումներ, որոնք հրապարակվում էին


«Յասնայա Պոլյանա» մանկավարժական ամսագրում: Տոլստոյը կարծում էր, որ դպրոցը պետք է բավարարի նաև հասարակ ժողովրդի՝ աշխատող մարդու կարիքները, այդ իսկ պատճառով դպրոցում անցնում էին աշխատանքի ուսուցում՝ ատաղձագործություն և գյուղատնտեսական աշխատանք: Աշխատանքը դեկավարում էր ինքը՝ Տոլստոյը: Խաղային որոշակի տարրեր ներառելով՝ նա փորձում էր ֆիզիկական աշխատանքը դարձնել գրավիչ ու հաճելի զբաղմունք: Տոլստոյը մեծ տեղ էր տալիս նաև ֆիզիկական զարգացմանը: 1862 թվականին Տոլստոյը սկսեց հրատարակել [«Յասնայա Պոլյանա» մանկավարժական ամսագիրը](#): Նա կարողացավ թողարկել ամսագրի 12 համար: Տոլստոյի մանկավարժական հոդվածները կազմում են նրա ստեղծագործությունների ժողովածուի մի ամբողջ հատորը՝ 1872 թվ-ին լույս ընծայվեց Տոլստոյի «Նոր այբբենարանը» և «Ռուսերեն գրքեր ընթերցանության համար» չորս գրքից բաղկացած շարքը, որը Ժողովրդական լուսավորության նախարարության կողմից, երկար քաշքշուկից հետո, հաստատվեց որպես ձեռնարկ տարրական կրթական հաստատությունների համարը՝

[Աղբյուրը](#)

Հեմինգուեյ, «Մահվան և վախի մասին»

Հատված Էռնեստ Հեմինգուեյի «Մարդու հավատամքը» գրքից

[«Ծերունին և ծովը»](#) գիրք է մարդկային կյանքի հերոսական ընթացքի մասին: Գրքի վրա աշխատելը ինձ համար դժվար էր: Ես ծերության սարսուռ էի զգում: Քչերն են մահանում ծերությունից: Գրեթե բոլորը մեռնում են հիասթափությունից, չափից ավելի մտավոր և ֆիզիկական աշխատանքից, ծանր ապրումներից, դժբախտ պատահարից: Մարդը գոյություն ունեցող կենդանի էակներից ամենաաշխատունակն է: Երկար ապրած կյանքը մարդուն հաճախ զրկում է լավատեսությունից: Կարճատև կյանքն ավելի լավ է: Հազիվ թե գտնվի մի մարդ, ով իր կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ չի զգացել ավելի ուժեղ ցավ, քան, սովորաբար, զգում է մահվան մահճում հայտնվածը: Մի անգամ հայտնի բժիշկն ինձ ասաց, որ մահվան տառապանքները թույլ ատամնացավի նմանվող ցավեր են:



Յուրաքանչյուրին վիճակված է լինել ռազմիկ, յուրաքանչյուրին վիճակված է մեռնել, միայն վախկոտներն են մեռնում իգուր: Ես միշտ հավատացել եմ՝ տղամարդու հիմնական պարտականությունը վախի հաղթահարումն է: Ոչինչ չի բարոյալքում մարդուն այնպես, ինչպես վախկոտությունն ու վտանգից վախենալը: Նման մարդիկ հեշտ ուղիները դժվարացնում են, իսկ դժվարները՝ անանցանելի դարձնում: Մարդիկ հաճախ ունենում են անկարևոր վախեր՝ վախ ամեն ինչ մինչև վերջ իմանալուց: Վախենում են բացահայտել փաստը, որն ինքնին այնքան սարսափելի չէ, որքան դրա հանդեպ տածած վախն է: Նրանք մշտապես ապրում են այն մտքի հետ, որ ուրվական են տեսել և տառապում են դրանից: Ավելի լավ է իմանալ վատը, քան ամեն օրը ապրել ամենավատն ունենալու վախը սրտում:

[Աղբյուրը](#)



**Կարինե Թևոսյան (Ֆրանսերենի դասավանդող)
Ջիբութիի աղբարկղը. Դանիել Պենակ
«Դպրոցական տիրություն» վեպից**

Ուրեմն՝ ես վատ սովորող աշակերտ էի:
Մանկությանս տարիներին ամեն երեկո
վերադառնում էի տուն այն զգացումով, թե դպրոցն
ինձ հետապնդում է: Իմ դասագրքերը խոսում էին
ուսուցիչներիս նախատինքի մասին: Եթե ես իմ
դասարանի վերջին աշակերտը չէի, ապա
նախավերջինն էի (կեցցեմ) □
Սկզբում թվաբանությունից, հետո մաթեմատիկայից
էի թույլ, ուղղագրությունից շատ վատ էի,
աշխարհագրական տարածքները տեղայնացնելիս և
տարեթվեր մտապահելիս ուղեղս համառում էր,

օտար լեզուներ սովորել չկարողացա. մի խոսքով, բացարձակ ծուլիկ էի (չսովորած դասեր,
չկատարած տնային...) □ Ես տուն էի գալիս ողորմելի արդյունքներով, որոնք ո՛չ երաժտությունը,
ո՛չ սպորտը, ոչ էլ ուրիշ մի արտադպրոցական գործունեություն չէին կարող շտկել:

- Դու հասկանո՞ւմ ես: Արդյո՞ք հասկանում ես՝ ինչ քեզ բացատրում եմ:
- Չէի հասկանում: Հասկանալու անկարողությունս սկսվել էր հեռավոր մանկությանս տարիներից,
այնպես էր, ընտանիքումս նույնիսկ առասպել էր հյուսվել այբուբեն սովորելուս ակունքների
մասին: Ես միշտ լսել եմ, որ ինձանից մի ամբողջ տարի է պահանջվել **ա** տառը սովորելու համար.
ա տառը՝ մեկ տարում: Տգիտությանս անապատը սկսում էր անհաղթահարելի **ծ**-ից անդին □
- Մի՛ անհանգստացե՞ք, քսանվեց տարուց նա կատարելապես կտիրապետի այբուբենին:
- Ես զարմանքի առարկա էի, քանի որ տարիներն անցնում էին՝ առանց դպրոցական բուժ վիճակս
բարելավելու: «Հավատս չի գալիս»-ը, «Դեռ ուշքի չեմ գալիս»-ը սովորական
բացականչություններ են՝ զուգորդված չափահասների հայացքներով, որոնցում շատ լավ տեսնում
էի, որ յուրացման անկարողությունս անսահման հիասթափություն է առաջացնում: Ըստ
երևույթին, բոլորն ամեն ինչ ինձանից ավելի արագ էին ըմբռնում:

- Դու կատարյալ բուժ ես:
- Բեռնարին տեղեկացնում եմ, որ մտադիր եմ դպրոցին վերաբերող մի գիրք գրել: Ոչ այն դպրոցի,
որ գետի պես հարափոփ այս հասարակության մեջ փոխվում է, այլ այն ամենի մասին, որ չի
փոխվում այս չղադարող կործանման կենտրոնում, հենց այն անփոփոխության մասին, որի մասին
երբեք չեմ լսել, որ խոսեն. ծուլիկի, ծնողների և ուսուցիչների ընդհանուր ցավի, դպրոցական այս
տառապանքների փոխազդեցության մասին:

- Ծավալուն նախագիծ է ... Եվ ինչպե՞ս ես մտադիր սկսելու:
- Օրինակ՝ քեզ հարցախեղդ անելով: Ի՞նչ հիշողություններ ես պահպանել, ասենք, օրինակ,
մաթեմատիկայից իմ դմբոյության մասին □
- Իմ եղբայր Բեռնարը ընտանիքի միակ անդամն էր, որ կարող էր ինձ օգնել դաս սովորելիս, եթե
անգամ ես ուստրեի պես փակվեի սենյակումս: Մենք նույն սենյակում էինք քնում մինչև գիշերօթիկ
դպրոցի հինգերորդ դասարան ընդունվելս:

- Դու պնդում էիր, որ ասում ես մեծատառերը:
- Ախ, այդ սարսափելի ժամապահ մեծատառերը: Ինձ թվում էր, թե մեծատառերը խոյանում են իմ
և հատուկ անունների միջև, որպեսզի ինձ արգելեն դրանց գործածումը: Մեծատառով գրված ամեն

մի բառ անմիջապես մոռացության էր մատնվում. քաղաքներ, գետեր, պատերազմներ, հերոսներ, պայմանագրեր, բանաստեղծներ, գալակտիկաներ, թեորեմներ... հիշողության արգելք՝ պրկախտ առաջացնող մեծատառերի պատճառով:

- Հերիք է,- բացականչում էր մեծատառը,- մուտքն արգելվում է, սա հատուկ անուն է, դու սրան արժանի չես, դու բութ ես:

- Բութը փոքրատառով է,- ուղղեց Բեռնարը ճանապարհին՝ կողք կողքի քայլելիս: Երկու եղբայր ծիծաղեցին:

Ավելի ուշ նույն բանը օտար լեզուների հետ եղավ: Չէի կարողանում մտքիցս հանել, որ այն ամենը, ինչ ասվում էր այդ լեզուներով, իմ խելքի բանը չէ:

- Ի՞նչն էր քեզ խանգարում սովորել նոր բառերի ցանկը□

- Անգլերենի բառերը հատուկ անունների նման անըմբռնելի էին ...

- Վերջին հաշվով դու հեքիաթ ես հորինում:


Այո, դա ծուլիկներին բնորոշ է: Նրանք մի շարք պատմություններ են հորինում իրենց ծուլության մասին՝ ես ոչինչ եմ, երբեք ոչինչ չեմ կարողանա, նույնիսկ հարկ չկա փորձելու, ես ձեզ հենց սկզբից ասել եմ, որ դպրոցն ինձ համար չէ: Դպրոցը ծուլերի համար փակ ակումբ է՝ մուտքն արգելվում է: Երբեմն ուսուցիչներից մեկն էր օգնում:

Բիարկե, հարց է առաջանում, թե որն է ուսման մեջ իմ չառաջադիմելու պատճառը:


Հայրս՝ ճարտարագետ, մայրս՝ տնային տնտեսուհի, ոչ մի ապահարզան, ոչ մի ակոհոլային խմիչք, ոչ մի հոգեկան խանգարում ունեցող մարդ, ոչ մի ժառանգական արատ, բակալավրի աստիճան ունեցող երեք եղբայր (մաթեմաթիկայի ֆակուլտետի ուսանողներ, ապագա երկու ինժեներ և մեկ սպա), կանոնավոր ընտանեկան ռիթմ, թարմ սնունդ, գրադարանը՝ տանը, միջավայրին և դարաշրջանին համապատասխան մշակույթ (հայրս ու մայրս ծնվել են 1914-ի սկզբին): Նկարչությունը՝ մինչև իմպրեսիոնիզմ, պոեզիան՝ մինչև Մալարմե, երաժշտությունը՝ մինչև Դեբյուսի, ռուսական վեպեր և այլն... Սեղանի շուրջ ծավալված խաղեր, կիրթ և հումորային գրույցներ:

Բայց և այնպես՝ մի ծուլիկ□

Աղբյուրը



Հասմիկ Ղազարյան (Հայոց լեզվի և գրականության դասավանդող)



Կուրոսավայի և Գարսիա Մարկեսի գրույցը

Գրող Գաբրիել Գարսիա Մարկեսը Տոկիոյում գրուցել է ճապոնացի 81-ամյա ռեժիսոր Ակիրա Կուրոսավայի հետ անցյալ տարի հոկտեմբերին, երբ կինոբեմադրիչը նկարահանում էր իր վերջին ֆիլմը՝ «Օգոստոսյան ռապսոդիան»² Ֆիլմը, որ թողարկվել էր դեկտեմբերին, օրերս ցուցադրվել է Կաննի կինոփառատոնին, որտեղ, ինչպես Մարկեսն է հաղորդում, արժանացել է հասարակության ու քննադատների բարձր ծափահարություններին, սակայն նյարդայնացրել է որոշ ամերիկյան լրագրողների, «...ովքեր դրանում

թշնամանք են տեսել իրենց երկրի նկատմամբ»³ Մարկեսը, որ նախկինում կինոքննադատ էր Կոլումբիայում և ավելի լավ ծանոթ է որպես «Հարյուր տարվա մենություն» վերայի հեղինակ, գրուցում է Կուրոսավայի հետ տարբեր թեմաներից ավելի քան վեց ժամ:

Գաբրիել Գարսիա Մարկես. Չեմ ուզում երկու ընկերների մեջ գրույցը նման լինի լրագրի հարցազրույցի: Բայց ինձ խիստ հետաքրքրում էր դու և քո աշխատանքը: Արի սկսենք նրանից, թե դու ինչպես ես քո սցենարները գրում: Նախ՝ հարցնում եմ, որովհետև ինքս սցենարիստ եմ, երկրորդ, որովհետև դու մեծ գրականությունից ահագին բան սցենարի ես վերածել: Ես իմ վերածները կամ նրանք, որ կարող էի վերաբաժնիս, էնքան էլ չեմ հավանում⁴

Ակիրա Կուրոսավա. Հենց հասկանում եմ, թե որն է այն առանձնահատուկ գաղափարը, որ ես ուզում եմ վերածել սցենարի, թուղթ ու մատիտով փակվում եմ մի հյուրանոցում: Այդ պահին ունենում եմ կառույցի հիմնական գաղափարը և քիչ թե շատ գիտեմ՝ ինչպես է գնում լուծման: Եթե չգիտեմ՝ ինչ տեսարանով սկսեմ, հետևում եմ մտքերիս ինքնաբուխ հոսքին⁵

Գարսիա Մարկես. Առաջինը, որ մտքումդ ծագում է, գաղափա՞րն է, թե պատկերը⁶

Կուրոսավա. Շատ լավ չեմ կարող բացատրել, բայց կարծում եմ՝ ամեն ինչ սկսվում է մի քանի ցրված պատկերներից: Դրան հակառակ, գիտեմ, որ էստեղ՝ Ճապոնիայում, սցենարիստներն առաջինը ստեղծում են սցենարի ամբողջական նկարագիրը՝ կազմակերպելով դա պատկեր առ պատկեր, հետո, հավաքելով կմախքը, սկսում են գրել: Բայց չեմ կարծում, թե դա ճիշտ ձև է, այն օրից ի վեր, ինչ մենք Աստված չենք⁷

Գարսիա Մարկես. Քո մեթոդը նույն այդ ինտուիտիվն է, երբ Շեքսպիր, Գորկի կամ Դոստոևսկի ես սցենարի վերածում⁸

Կուրոսավա. Ֆիլմ ստեղծող ռեժիսորները կարող են կիսով չափ չիրականացնել գրական գործը, քանի որ շատ դժվար է գրական պատկերները հասցնել հանդիսատեսին կինոյի պատկերներով: Օրինակ՝

դեղեկտիվ վեպի սցենարացման ժամանակ, եթե մի դիակ է հայտնաբերվում գնացքի գծերի կողքին, անփորձ ռեժիսորը պնդում է, որ տեղը ճշգրտորեն համապատասխանի գրքում նշվածին: Ասում եմ. «Միայլ եք: Խնդիրն այն է, որ դուք կարդացել եք վեպը և գիտեք, որ դիակ է հայտնաբերվում երկաթգծի մոտ: Բայց այն մարդկանց համար, ովքեր սա չեն կարդացել, տեղը առանձնապես կարևոր չի»² Անփորձ ռեժիսորը հմայված է գրականության կախարդական ուժով՝ մոռանալով, որ կինեմատոգրաֆիկ պատկերը ուրիշ կերպ է արտահայտիչ լինում²

Գարսիա Մարկես. Կարո՞ղ ես հիշել իրական կյանքից որևէ պատկեր, որ համարել ես ֆիլմով արտահայտելու համար անհնար²

Կուրոսավա. Այո: Լիդաչի կոչվող հանքարդյունաբերական քաղաքը, որտեղ երիտասարդ ժամանակ աշխատում էի ռեժիսորի օգնական: Ռեժիսորը մի հայացքից հայտարարեց, որ մթնոլորտը տպավորիչ է ու հիասքանչ, դրա համար էլ դա նկարում ենք: Բայց պատկերները միայն մոռոններով ձգվող քաղաք էին ցույց տալիս, քանի որ օբյեկտիվը բաց էր թողել մի բան, որ մենք գիտեինք. աշխատանքի պայմանները (քաղաքում) շատ վտանգավոր են, և հանքավորների կանայք ու երեխաները իրենց ապահովության կորստի մշտական վախի մեջ են: Երբ մարդ նայում է գյուղին, կարող է լանդշաֆտն ու զգացումը շփոթել, կարող է ընդունել դա որպես ավելի հիասքանչ մի բան, քան իրականում կա: Բայց տեսախցիկը նույն աչքով չի տեսնում դա²

Գարսիա Մարկես. Իրականում ես շատ քիչ հեղինակներ գիտեմ, որ գոհ են եղել իրենց գրքի սցենարացումից: Քո սցենարացումներն ի՞նչ փորձ են քեզ տվել²

Կուրոսավա. Նախ՝ թույլ տուր հարցնել՝ դիտե՞լ ես իմ «Կարմիր մորուք» ֆիլմը²

Գարսիա Մարկես. 20 տարվա ընթացքում վեց անգամ դիտել եմ և պատմում էի իմ երեխաներին դրա մասին գրեթե ամեն օր, մինչև իրենք ի վիճակի եղան դիտելու: Դա ոչ միայն իմ ընտանիքի առանձնապես սիրած ֆիլմն է քո աշխատանքների մեջ, այլև իմ ամենասիրելին է ընդհանրապես կինոյի պատմության մեջ²

Կուրոսավա. «Կարմիր մորուքը» հղման մի կետ ունի դեպի իմ զարգացումը: Դրան նախորդած բոլոր ֆիլմերս տարբեր են հաջողվածներից: Դա մի մակարդակի ավարտն էր և մյուսի սկիզբը²

Գարսիա Մարկես. Դա ակնհայտ է: Ընդ որում, նույն ֆիլմի մեջ երկու տեսարան կա, որ զագաթ են քո աշխատանքների ամբողջության մեջ, և երկուսն էլ անմոռանալի են. մեկը ճուռակի աղոթելու դրվագն է, մյուսը՝ հիվանդանոցի ներքին բակում կարատե- կռիվը²

Կուրոսավա. Այո, բայց գիտե՞ս ինչ էի ուզում ասել. Շուգուրո Յամամոտոն (Shuguro Yamamoto) միշտ դեմ է, որ իր վեպերը ֆիլմի վերածեն: Բացառություն է արել «Կարմիր Մորուքի» համար, որովհետև ես համառորեն ու դաժանորեն այնքան պնդեցի, մինչև հաջողեցի: Հետո, երբ դիտումն ավարտեց, շրջվեց իմ կողմն ու ասաց. «Բայց կարծես սա ավելի հետաքրքիր է, քան իմ վեպը»²

Գարսիա Մարկես. Զարմացա: Ինչո՞ւ է այդքան հավանել²

Կուրոսավա. Որովհետև նա հստակ պատկերացում ուներ կինոյի պարտադիր նկարագրի մասին: Միակ պայմանը, որ դրեց իմ առաջ, գլխավոր հերոսի՝ ինչպես ինքն էր տեսնում նրան, լրիվ

անհաջողակ մի կնոջ նկատմամբ ուշադիր լինելն էր: Բայց հետաքրքիրն այն է, որ անհաջողակ կնոջ գաղափարը պարզորոշ չէր վեպում՝

Գարսիա Մարկես. Երևի կարծել է, թե պարզորոշ է: Նման բան հաճախ է պատահում մեզ՝ վիպասաններին հետո՝

Կուրասավա. Այդպես էլ կա: Փաստորեն, իրենց գրքերի թեմաներով ֆիլմը դիտելով, որոշ գրողներ ասում են. «Իմ գրքի այսինչ մասը լավ է նկարահանված»՝ Բայց, արի ու տես, որ այս վերաբերմունքը մի բանի նկատմամբ է, որ ռեժիսորն է ավելացրել: Ես հասկանում եմ՝ ինչ են ասում, որովհետև երևի պարզ տեսնում են բացառապես ռեժիսորի ինտուիցիայով էկրանին արտահայտված մի բան, որ իրենք մտադիր են եղել գրելու, բայց չեն կարողացել՝

Գարսիա Մարկես. Հայտնի փաստ է՝ բանաստեղծները թույնի խառնուրդ են: Բայց, վերադառնալով քո ընթացիկ ֆիլմին, ամենադժվարը թայֆոնն է նկարահանվել՝

Կուրասավա. Չէ, ամենադժվարը կենդանիների հետ աշխատանքն էր: Ջրային օձ, վարդ ուտող մրջյուններ: Ընտելացված օձերը չափազանց սովոր են մարդկանց, բնագոյաբար չեն փախչում և իրենց օձաձկան պես են պահում: Որոշեցինք մի մեծ վայրի օձ բռնել, որ իր ամբողջ ուժով կփորձի փախչել և ճշմարտապես սարսափելի կլինի: Նա շատ լավ իր դերը խաղաց: Ինչ վերաբերում է մրջյուններին, խնդիրը նրանց վարդի թփի վրա մի շարքով մագլցել ստիպելն էր, մինչև կհասնեն վարդին: Շատ երկար աշխատեցին, մինչև մեղրի գիծ արեցինք ցողունին, ու մրջյունները մագլցեցին: Փաստորեն շատ դժվարություններ ունեցանք, բայց գործն արժեր դրան, որովհետև ես ահագին բան սովորեցի նրանց մասին՝

Գարսիա Մարկես. Հա, նկատել եմ: Բայց սա ի՞նչ տեսակ ֆիլմ է, որ բախտ է ունեցել խնդիրներ ունենալու մրջյունների, ինչպես և թայֆոնների հետ: Ո՞րն է սյուժեն՝

Կուրասավա. Մի քանի բառով ներկայացնելը շատ դժվար է՝

Գարսիա Մարկես. Ինչ-որ մեկը ինչ-որ մեկին սպանե՞լ է՝

Կուրասավա. Ոչ: Դա պարզապես Նագասակիից մի ծեր կնոջ մասին է, ով վերապրել է ատոմային ռումբից հետո, և ում թոռները ամռանը իրեն հյուր են եկել: Ես ապշեցուցիչ ռեալիստական ֆիլմ չեմ նկարել, որ կապացուցի այդ ամենի անտանելի լինելը, բայց դեռ չի բացատրի բոլորին ու հենց իրենց դրամայի ողջ սարսափելիությունը: Այն, ինչ ուզում էի փոխանցել, վերքերի տեսակն է, որ ատոմային ռումբը թողել է մեր ժողովրդի սրտում, և թե ինչպես են քիչ-քիչ սկսում ապաքինվել դրանից: Ես ռմբակոծության օրը լավ եմ հիշում, բայց մինչև հիմա հավատս չի գալիս, որ իրական աշխարհում կարող էր նման բան տեղի ունենալ: Բայց ամենավատն այն է, որ ճապոնացիներն արդեն դա մոռացության գիրկն են նետել՝

Գարսիա Մարկես. Ճապոնիայի ապագայի, ճապոն ժողովրդի նույնականացման համար ի՞նչ է նշանակում այդ պատմական ամենեզիան՝

Կուրասավա. Ճապոնացիները դրա մասին բացահայտ չեն խոսում: Մասնավորապես մեր քաղաքագետները լուռ են, որովհետև վախենում են Միացյալ Նահանգներից: Նրանք ընդունում են (նախագահ Հարրիս) Թրումանի այն բացատրությունը, թե ատոմային ռումբին դիմել է միայն

պատերազմի ավարտը մոտեցնելու համար: Բայց մեզ համար պատերազմը շարունակվում է: Հիրոսիմայում ու Նագասակիում մահացածների պաշտոնապես հրապարակված թիվը 230.000 է: Բայց իրականում մոտ կես միլիոն մահացած կար: Մինչև հիմա՝ աղետից 45 տարի անց, Ատոմային ռումբի հոսպիտալում 2.700 տուժածներ կան, որ սպասում են իրենց մահվանը հետպայթյունային ճառագայթման հետևանքով: Այլ կերպ ասած՝ ատոմային ռումբը դեռ սպանում է ճապոնացիներին²

Գարսիա Մարկես. Ամենառացիոնալ բացատրությունը, թվում է, այն է, որ ԱՄՆ-ն ձգտեց ավարտել պատերազմը ռումբով, որովհետև վախենում էր, թե մինչև ինքը հասնի, Սովետը կգրավի Ճապոնիան²

Կուրոսավա. Լավ, բայց ինչո՞ւ դա արեցին քաղաքներում, ուր միայն խաղաղ բնակչություն կար, որը գործ չունեի պատերազմի հետ: Կային ռազմական միավորումներ, որոնք, փաստացի, վաստակել էին դա (պատերազմը)²

Գարսիա Մարկես. Ոչ էլ Իմպերատորական պալատի վրա գցեցին, որը Տոկիոյի սրտում ամենաթույլ տեղն էր: Կարծում եմ, որ այս ամենը բացատրվում է այն փաստով, որ ուզել են քաղաքական ուժն ու ռազմական ուժը անվնաս թողնել, որ արագացված բանակցություններ կորզեն՝ առանց ավարը դաշնակիցների հետ բաժանելու անհրաժեշտության: Նման փորձ ուրիշ ոչ մի երկիր չի ունեցել մարդկության ողջ պատմության մեջ: Հիմա՝ ճապոնացիները կհանձնվեի՞ն առանց ատոմային ռումբի: Դա կլինե՞ր նույն Ճապոնիան, ինչ այսօրվանն է²

Կուրոսավա. Դժվար է ասել: Նագասակիից վերապրած մարդիկ չեն ուզում հիշել իրենց կենսափորձը, որովհետև նրանց մեծամասնությունը, ապրելու համար, ստիպված էր լքելու իր ծնողներին, զավակներին, եղբայրներին ու քույրերին: Նրանք չեն կարողանում ազատվել մեղքի զգացումից: Դրա հետևանքով Ամերիկյան զորքերը, որ վեց տարով օկուպացրել էին երկիրը, տարբեր միջոցներով նպաստեցին մոռացման արագացմանը, և ճապոնական իշխանություններն էլ համագործակցեցին նրանց հետ: Ես նույնիսկ պատրաստ էի սա հասկանալու որպես անխուսափելի ողբերգություն, որ պատերազմի հետևանք է: Բայց կարծում եմ, որ ամենաքիչը, երկիրը, որ ռումբ է գցել, պիտի զոջում արտահայտի ճապոնացի ժողովրդի առաջ: Քանի դա չի եղել, այս դրաման չի ավարտվելու²

Գարսիա Մարկես. Այդքան ո՞ւշ: Չէ՞ր կարող դժբախտությունը հատուցվել երջանկության երկար դարաշրջանով²

Կուրոսավա. Ատոմային ռումբը արձանագրեց Սառը պատերազմի և սպառազինության մրցավազքի սկիզբը և նշեց միջուկային էներգիայի արտադրման և սպառման գործընթացի սկիզբը: Երբեք հնարավոր չէ նման ակունքից տրված երջանկություն²

Գարսիա Մարկես. Հասկանում եմ: Միջուկային էներգիան ծնվել է որպես անիծյալ ուժ, և ուժը, որ ծնվել է անեծքի տակ կատարյալ թեմա է Կուրոսավայի համար: Բայց ինձ հետաքրքիր է, դատապարտում ես ոչ թե միջուկային էներգիան՝ որպես այդպիսին, այլ այն ճանապարհը, որով շեղվեցին հենց սկզբից: Էլեկտրականությունը լավ բան է ի հեճուկս էլեկտրական աթոռի²

Կուրոսավա. Դրանք նույնը չեն: Կարծում եմ՝ միջուկային էներգիան հեռու է վերահսկումից, որ կարող է հաստատվել մարդկանց կողմից: Միջուկային էներգիայի կառավարման սխալի դեպքում վայրկենական աղետը հսկայական կլինի, և ռադիոատիվությունը կմնա հարյուրավոր սերունդներին: Ուրիշ խոսքով՝ եթե ջուրը եռում է, հերիք է՝ թողնես սառչի. վտանգը շատ երկար չի մնում: Դե եկեք

դադարեցնենք այն տարրերի օգտագործումը, որոնք շարունակում են եռալ հարյուր հազարավոր տարիները՝

Գարսիա Մարկես. Ես Կուրոսավայի ֆիլմերից եմ փոխ առել մարդկության նկատմամբ իմ հավատի մի մեծ չափաբաժին: Բայց նաև հասկանում եմ քո դիրքորոշումը միայն քաղաքացիական բնակչության դեմ առումային ռուս օգտագործելու և Ամերիկայի ու Ճապոնիայի գաղտնի համաձայնությամբ Ճապոնիային դա մոռանալ ստիպելու սարսափելի անարդարության նկատմամբ: Բայց ինձ համար հավասարապես անարդար է միջուկային էներգիան հավիտյանս անիծյալ համարելը՝ առանց հաշվի առնելու, որ դա կարող է ոչ ռազմական մեծ ծառայություն մատուցել մարդկությանը: Էստեղ դու զգացմունքների խառնաշփոթ ունես, որովհետև գիտես, որ Ճապոնիան մոռացել է, և որովհետև մեղավորը, որ, ինչպես գիտենք, Միացյալ Նահանգներն է, ի վերջո չի հասել մեղքն ընդունելուն և չի հատուցել ճապոն ժողովրդին զղջման արտահայտությամբ, ինչը պատշաճ էր այս դեպքում՝

Կուրոսավա. Մարդ արարածը ավելի մարդկային կլինի, երբ գործ անի. մոտեցումները մի իրականության նկատմամբ են, որը չպետք է խաղի առարկա դառնա: Չեմ կարծում, թե ճիշտ է առանց անուսի երեխաներ ծնելը կամ ութոտնանի ձի, ինչպես պատահում է Չերնոբիլում: Բայց հիմա, կարծում եմ, այս գրույցը չափազանց լուրջ է դառնում, և սա չէր իմ նպատակը՝

Գարսիա Մարկես. Ճիշտ ենք անում: Եթե նյութն այնքան լուրջ է, որքան սա, ինչն՝ վ կարող ես օգնել գործին, լրջորեն քննարկելուց բացի: Ֆիլմը, որ շուտով ավարտելու ես, այս իմաստով լույս սփռում է քո մտքերի վրա՝

Կուրոսավա. Անուղղափորեն: Ես երիտասարդ լրագրող էի, երբ ռուսները գցեցին: Ուզում էի նյութեր գրել, թե ինչ տեղի ունեցավ, բայց դա բացարձակ փակ թեմա էր մինչև օկուպացիայի ավարտը: Հիմա այս ֆիլմն անելու համար ես սկսեցի հետազոտել ու ուսումնասիրել և հիմա շատ ավելին գիտեմ, քան այն ժամանակ: Բայց եթե մտքերս ուղղակի արտահայտեմ, այսօր չեմ կարողանա ցուցադրված լինել Ճապոնիայում կամ ուրիշ մի տեղ՝

Գարսիա Մարկես. Ի՞նչ ես կարծում. Այս գրույցի պատճենները կարո՞ղ են հրապարակվել՝

Կուրոսավա. Ես առարկություն չունեմ: Ընդհակառակը: Սա առիթ կլինի, որ շատ մարդիկ ամբողջ աշխարհում իրենց կարծիքներն արտահայտեն առանց որևէ տիպի սահմանափակման՝

Գարսիա Մարկես. Շնորհակալ եմ: Ամեն ինչ ճիշտ է: Կարծում եմ՝ եթե ես ճապոնացի լինեի, ես էլ քեզ պես այս խնդրի պահանջատերը կլինեի: Ես քեզ բոլոր մակարդակներում հասկանում եմ: Ոչ մի պատերազմ ոչ ոքի համար լավը չէ՝

Կուրոսավա. Այդպես է: Տազնապալին այն է, որ հենց հրաձգությունն սկսվում է, Քրիստոսն ու հրեշտակներն էլ են դառնում հաստիքավոր ռազմական ղեկավարներ՝

[Աղբյուրը](#)

Նոամ Չոմսկի. Մեդիայի մոլորեցնող տասը ռազմավարությունները

Ամերիկյան փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ, քաղաքական ակտիվիստ և Մասաչուսեթսի Տեխնոլոգիայի ինստիտուտի լեզվաբանության վաստակավոր գործիչ Նոամ Չոմսկին (Noam Chomsky) հավաքել է տասը ամենաազդեցիկ ու արդյունավետ ռազմավարությունները, որ օգտագործում են «խոսքի վարպետները»՝ մոլորեցնելու համար հասարակությանը մեդիայի միջոցով:

Ռազմավարություններն այնքան լավ են մշակված, որ լավագույն կրթական համակարգ ունեցող երկրներն անգամ ենթարկվում են այս մաֆիայի ուժին ու տեռորին: Նորություններ հաղորդելիս շատ բան են ասում, բայց մի քանիսն են բացատրում: Լրագրողական միտումը երկու հակադիր տեսանկյուններից հավասարակշռելու պատմությունները, տանում են «գլխավորների ու


հակառակորդների մեջ բախման շուրջ պատմություն հորինելու միտմանը» ((Ricci 1993: 95)Ձ Միայն ավելցուկների ու ցեխաջրերի նման հրապարակումներն են տեղ գտնում՝ անկախ իրենց կարևորության աստիճանից: Երբ աղբը թաղելու կամ այրելու շուրջ լուսաբանում է լինում, վրդովված քաղաքացիների զայրույթն ու ցավը կամ ընկերության խոսնակի, կառավարության անդամի ու բնապահպան ակտիվիստի անհամատեղելի պահանջները նախընտրելի են լինում, քան քննարկումներն ու մասնագիտական վերլուծությունները դրանց շուրջ (Gersh 1992: 16)Ձ Մեդիայի գործը ոչ թե տեղեկացնելն է, այլ ապատեղեկացնելը: Քաղաքագետների ու տնտեսական վերնախավի որոշած կարևոր խնդիրներից ու փոփոխություններից հանրության ուշադրությունը շեղում են հեղեղի տեխնիկայով կամ ուշադրություն գրավող ու անկարևոր տեղեկության շարունակվող հեղեղով:

Լրագրողները, որ հասել են կառավարության ու կորպորացիայի բարձր դիրքերին, հարկ ունեն նրանց կողմը բռնելու, դրա համար էլ չեն հաղորդում նրանց անձի կամ նրանց կազմակերպության մասին որևէ թշնամական բան: Հակառակ դեպքում կարող են կորցնել իրենց տեղեկատվության աղբյուրը: Հավատարիմ մնալու դեպքում նրանց աղբյուրները երբեմն լավ պատմություններ, տեղեկության արտահոսք են տալիս նրանց ու հատուկ հարցազրույց հաջողեցնում: Ոչ պաշտոնական տեղեկատվությունը կամ արտահոսքը հետազոտական լրագրության տպավորություն են թողնում, բայց ռազմավարական մոլորեցում են դիրք կամ ուժ ունեցողների կողմից (Ricci 1993: 99)Ձ

«Լրագրության դառը հեզնանքն է, որ ամենաճանաչված լրագրողները միանշանակ ամենահաճկատարներն են, որովհետև նրանք, ուժեղների համար օգտակար մարդ դառնալով, կարողանում են հասնել «լավագույն» աղբյուրներին» (մեջբերված է Lee and Solomon 1990: 18 –ում)Ձ

Տասը ռազմավարությունները

1. Ուշադրությունը շեղելու ռազմավարությունը



Հասարակությանը վերահսկելու գլխավոր բաղադրիչը հեղեղի տեխնիկայով կամ ուշադրություն գրավող, բայց անկարևոր տեղեկության շարունակվող հեղեղով նրա ուշադրությունը շեղելն է քաղաքական ու տնտեսական վերնախավի արած կարևոր փոփոխություններից:

Շեղող ռազմավարությունը գործում է նաև կասեցնելու համար գիտության, տնտեսության, հոգեբանության, նեյրոկենսաբանության ու կիրառական տեխնոլոգիայի ասպարեզներից անհրաժեշտ գիտլեիքների նկատմամբ հասարակության հետաքրքրությունը: «Իրական սոցիալական խնդիրներից հեռու պահելով՝ հասարակության ուշադրությունը գրավել անկարևոր հանգամանքներով: Հասարակությանը միշտ զբաղված պահել, զբաղված, զբաղված, որ ժամանակ չունենա մտածելու, միշտ իր բանուգործին լինի» (մեջբերում «Խաղաղ պատերազմների անադմուկ զենքերը» տեքստից)Ձ

2. Խնդիր ստեղծելն ու հետո լուծում առաջարկելը

Այս մեթոդը կոչվում է նաև «Խնդիր-արձագանք-լուծում»Ձ Այս դեպքում մի խնդիր, մի «իրադրություն» է ստեղծվում՝ առաջ բերելու համար հանրության արձագանքը, ասես դա գլխավոր նպատակ է, որին ուզում ես հասնել: Օրինակ՝ թույլ են տալիս տարածվելու և սաստկանալու քաղաքային դաժանությանը կամ արյունահեղություններ են կազմակերպում, որպեսզի հանրությունը անվտանգության օրենքերի և ոստիկանության օգնությանը դիմի՝ սահմանափակելու ազատությունը: Կամ ստեղծում են տնտեսական ճգնաժամ՝ հասնելու համար սոցիալական իրավունքների ու հանրային ծառայությունների անհրաժեշտ նվազեցմանը:

3. Աստիճանական ռազմավարությունը

Անընդունելի աստիճանն ընդունելի դարձնելու համար պետք է դա քիչ-քիչ տալ, կաթիլ առ կաթիլ, տարեցտարի: Ահա այսպես են արմատապես նոր սոցիալ-տնտեսական պայմանները (նեոլիբերալիզմ) ներդրել 1980-ականներին և 1990-ականներին.

- նվազագույն ունեցվածք
- սեփականաշնորհում
- անկայունություն
- հարմարվողականություն
- զանգվածային գործազրկություն
- գրավներ

ոչ մի երաշխիք համապատասխան տնտեսվարման ... այնքան շատ դժվարություններ, որ եթե միաժամանակ արվեին, կհանգեցնեին հեղափոխության:

4. Հետաձգման ռազմավարություն

Հասարակության համար անընդունելի որոշում ընդունելու մի այլ ճանապարհ է դա ներկայացնելը որպես «ցավոտ, բայց անհրաժեշտ» մի բան՝ վաստակելով հետագայում հանրության ըմբռնումով մոտեցումը: Ավելի հեշտ է ընդունել, որ զոհաբերությունը լինելու է ապագայում, ոչ թե անմիջապես. նախ՝ որովհետև ջանքերը անմիջապես չեն թափվում, հետո՝ որովհետև հասարակությունը, հանրությունը հակում ունի միամտորեն կարծելու, թե «վաղն ամեն ինչ ավելի լավ է լինելու» և կարողանալու են զոհաբերումից խուսափել:

Սա հանրությանը ավելի շատ ժամանակ է տալիս վարժվելու դժվարության մտքին և խոնարհաբար ընդունելու դա, երբ ժամանակը գա:

5. Փոքր երեխայի նման դեպի ժողովուրդը գնալը

Գովազդային գործակալությունների մեծ մասն օգտագործում է հանրության համար սովորական խոսքը, փաստարկը, մարդկանց և մասնավորապես երեխաների հաճախ թուլամտության հասնող առողջանությունը, ասես ակնդիրը փոքր երեխա է կամ մտավոր հետամնաց: Երբ կոպիտ մեկն ուզում է խաբել ակնդիրի աչքը, սովորաբար որդեգրում է մանկամտության տոնը: Ինչո՞ւ:

«Երբ մեկը հանդես է գալիս որպես 12 տարեկան կամ դրանից էլ փոքր, ապա, ամենայն հավանականությամբ, սպասում է, որ հակազդեցությունն էլ կլինի առանց քննադատության, ինչպես 12 տարեկանի կամ դրանից էլ երիտասարդի նկատմամբ է» (տե՛ս «Խաղաղ պատերազմների անադմուկ զենքերը»)Ձ

6. Ավելի շատ զգացմունքային կողմի քան քննադատական մտածողության օգտագործումը

Ստիպելը, որ զգացմունքային ընկալում լինի, դասական տեխնիկա է խելամիտ վերլուծությունների շրջանակը, ի վերջո անհատ մարդկանց քննադատական ընկալումները կարճելու: Բացի դրանից՝ զգացմունքային պաշարներն օգտագործելը դուռ է բացում չգիտակցված գաղափարների, ցանկությունների, վախերի ու տագնապների, բռնության արմատավորմանը կամ պատվաստմանը, կամ որոշակի վարքի է մղում:

7. Մարդկանց անգիտության ու միջակության մեջ պահելը

Հասարակությունը անընդունակ դարձնելն է հասկանալու տեխնոլոգիաներն ու մեթոդները, որ կիրառվում են վերահսկելու ու ստրկացնելու համար: «Կրթության այն մակարդակը, որ տրվում է սոցիալական ցածր խավին պիտի հնարավորինս աղքատիկ ու միջակ լինի, որ ցածր խավի մեջ դրա ծրագրած անտեղյակության խոռոչները բարձր խավին մշտապես անհասանելի պահեն նրանց համար (տես «Խաղաղ պատերազմների անադմուկ զենքերը»)Ձ

8. Խրախուսել մարդկանց ինքնագոհությունն իրենց միջակությամբ

Հանրության մեջ տարածել միտքը, թե հիմար, վուլգար ու անգրագետ լինելը մոդայիկ է:

9. Ինքնախարազանման սաստկացում

Թույլ տալ մարդկանց ինքնախարազանելու իրենց անբավարար ինտելեկտի, ընդունակությունների կամ ջանքերի պատճառով ձախողումների համար: Ուրեմն՝ փոխանակ ըմբոստանալու տնտեսական համակարգի դեմ, մարդիկ ինքնաարժեզրկվում են ու մեղքի զգացում են ունենում, ինչը ընկճախտ է առաջացնում, մի բան, որ խոչընդոտում է գործողությունը: Իսկ առանց գործողության չկա հեղափոխություն:

10. Մարդուն ավելի լավ ճանաչելը, քան ինքն է իրեն ճանաչում

Անցած 50 տարիներին գիտության՝ արագ տեմպերով զարգացումը աճող խոռոչ է առաջացրել հասարակական ու այն գիտությունների միջև, որոնք ունի և գործածում է գերիշխող էլիտան: Կենսաբանության, նեյրոկենսաբանության ու կիրառական հոգեբանության շնորհիվ «համակարգը»

երկու՝ ֆիզիկական և հոգեբանական տեսակետից մարդ արարածի մասին աղավաղված պատկերացում է ընդունել:

Համակարգը պիտի ավելի լավ ճանաչի հասարակ մարդուն, քան նա ինքն է իրեն ճանաչում: Սա նշանակում է, որ համակարգը շատ դեպքերում ավելի նշանակալից հսկողություն ու ավելի մեծ ուժ է գործադրում մարդկանց վրա, ավելի մեծ, քան մարդիկ իրենք՝ իրենց վրա:

Հոդվածի հեղինակը Սիլվեյն Թայմզիթն է, նյութը հրատարակվել է [Pressenza](#) լրատվականում, փարիզում, 2010 թվի սեպտեմբերին

[Աղբյուրը](#)

11.10.2014

